№ 3. ՅՈՒՆՎԱՐԻ 20 (ՓԵՏՐՎԱՐԻ 1) 1877 ՅՈՒՆՎԱՐԻ 20 (ՓԵՏՐՎԱՐԻ 1) № 3.

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ„

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

# ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

կը հրատարակվի այս 1877 թւից շաբաթը երկու անգամ։ Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մահմետական կղերականութիւն։—Ներքին տեսութիւն։ Թուրքաց «Ակինչի» լրագրի առաջնորդող յօդվածը։ Գիրք գիւղի հասարակութեան վճռով սկսած գործը։ Նամակ Մօսկվայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—Յայտարարութիւններ։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ թոյլ տուած Լօտարէայի Մանածօղովի կողմից որ հաստատված է յօգուտ բարեգործական և դաստիարակական հիմնարկութիւնների Կովկասում և Անդրկովկասում, որ գտնվում է Մեծ Իշխանուհի Օլգա Ֆեօդորօվնայի Օգոստափառ հովանաւորութեան տակ, ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ թոյլտւութեամբ յայտնվում է՝

1) Վերջնական և առանց որ և է փոփոխութեան ժամանակամիջոցը մանածօղովի գործունէութեան աւարտման, նշանակվում է փետրվարի 12-ը 1877 թւի, որ խաղարկութեան օրից կը կազմի մի տարի։

2) Այդ ժամանակի ընթացքում ամբողջ օպերացիայի հաշիւը կը վերաքննվի։

3) Մանածօղովը խոնարհաբար խնդրում է այն անձանց և հիմնարկութիւնները, որոնք դեռ չեն վերցրել իրանց ստացվածները, կամ տոմսակների ծախելու մասին հաշիւ չեն ներկայացրել, շտապէին այդ կատարել, դիմելով ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ պալատական կանտօրայի (Придворная Контора) հասցէով, Թիֆլիս։

4) Առաջիկայ փետրվարի 12-ին կը փակվի Մանածօղովի գործունէութիւնը, որ իրան արդար պարտաւորութիւն է համարում կատարեալ շնորհակալութեան զգացմունքով վերաբերվել դէպի այն ամեն անձինք և հիմնարկութիւններ, սրոնք բարեհաճել են գործակցել նրա նպատակներին։

և 5) Մնացած լրագիրներին թոյլ է տրվում արտատպել այդ յայտարարութիւնը։

1 (3)

## ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԿՂԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ներկայ համարում մենք արտատպում ենք մի շատ զարմանալի յօդված Բագուի թուրքաց «Ակինչի» լրագրից։

Կարդալով այդ յօդվածը մարդը կը կարծէ, որ լրագրի խմբագիրը անպատճառ մի թուրք վարդապետ, մի մօլլա է, և երբէք չի հաւատայ որ այդ խմբագիրը մի ուսում առած, համալսարանի բնագիտական բաժնում իր բարձր ուսումը աւարտած մի երիտասարդ է։

Ի՞նչ անուն տանք այն համալսարանական մարդուն, որ տասն և իններորդ դարում ուխտագնացութիւններին կրթողական, քաղաքակրթական նշանակութիւն է տալիս, այն ինչ ամբոխի այդ տեսակ գումարումները, բացի կրօնական զգացմունքը ժողովրդի մէջ արմատացնելուց, միշտ նպաստել են ամենադիւրին կերպով տգէտ ամբոխի մէջ ամեն տեսակ նախապաշարմունքների և մոլեռանդութիւնների զարգացնելուն։ Ի՞նչ կրթողական ազդեցութիւն, ինչ լուսաւորող և պիտանի օգուտ կարող են բերել մի որ և է ազգի տգէտ և խաւար ամբոխի այս կամ այն տեղ գումարվելը, առանց որ և է կրթողական ոյժի առաջնորդութեան, առանց լուսաւորող ուղղութեան։

Իսկ ընդհակառակն, շատ ազգերի մէջ, որտեղ տօները անցնում են գինի խմելով, այդ տօնախմբութիւնների մէջ լինում է մի կրթողական, հասարակական, ազգային ուղղութիւն։ Թող պ. խմբագիրը այցելէր Եւրօպայի ժողովրդական, ազգային տօները....

Թուրք լրագրի խմբագիրը վերջացնում է իր յօդվածը, այո՛, շատ գեղեցիկ խօսքերով, խորհուրդ տալով տգիտութեան մէջ ընկած իր համազգայիններին հիմնել ուսումնարաններ, ուսում առնել... բայց ի՞նչ նպատակով... Նրա համար, ասում է նա, որ ուսանելով գոնէ իրանց համազգայինների լեզուն, մահմետական եղբայրները կարող էին ձգտել դէպի մահմետականութեան միութիւնը։

Ի՞նչ բան է այդ մահմետականութեան միութիւնը... մենք հաւատացած ենք, որ ինքն խմբագիրը լաւ չէ հասկացել իր ասածը....

Այդ ուրիշ բան չէ եթէ ոչ մահմետական կղերականութիւն, մահմետական կաթօլիկութիւն։

Այդ մահմետականութիւնը, որ դարերով քրիստոնեաներին և հրէաներին բռնի իր հաւատին էր դարձնում, այժմ քարոզում է մահմետական եղբայրներին միութիւնը....

Ինչպէս կանուանէք դուք օրինակ մի ռուս, կամ մի այլ ազգի ուղղափառ խմբագրին, որ քարոզէր իր լրագրի մէջ, անտես առնելով այլ և այլ ազգութիւնները, բոլոր ուղղափառ ազգերի միութիւնը այլ և այլ միմեանցից բոլորովին տարբեր ծագումի՝ սլավօնացիներին յոյներին և ռումանացիներին,—ինչպէս կանուանէիք, եթէ ոչ կղերական։ Այդպէս է վարվում և կաթօլիկութիւնը։ Անտես առնելով, իր սրտում սպանելով անհատական զգացմունքը, նա կամենում է նոյն զգացմունքը սպանել և այլ և այլ կաթօլիկ ազգերի մէջ, միացնելով նրանց մի բարոյական գաղափարի մէջ, այսինքն հրաժարեցնել տալով նրանց ազգութեան գաղափարը՝ ենթարկել նրանց պապի, կաթօլիկ կենտրօնական հոգևոր իշխանութեանը։

Թո՛ղ մահմետական աշխարհը յետ տայ մեզ, յետ տայ քաղաքակրթութեանը խալամին բռնի կերպով դարձրած միլիօնաւոր հայ, վրացի, յոյն, սլավօնացի և այլ արիական ցեղերին պատկանող տարրերը, որոնց երակների մէջ վազում է ոչ թէ մօնգօլական ցեղի, այլ աւելի բարձր, քաղաքակրթութեանը աւելի ընդունակ ցեղերի արիւնը,—և թո՛ղ այն ժամանակ տեսնէ թէ ինչպէս կարող է նա քաղաքակրթվել իր խալամի միջոցով, սահմանափակելով իր շրջանը միմիայն մօնգօլական ցեղերով....

Մենք չէինք կարող մեզ երևակայել որ մի համալսարանական մարդու գլխից, այն էլ բնագէտից, կարող էր դուրս գալ այն ծայրայեղ կղերական միտքը, թէ կրօնի, այն էլ մահմետականութեան պէս սահմանափակ, ամեն մարդկային անհատութիւնը ոչնչացնող, սպանող կրօնի միջոցով պէտք է ձգտել այլ և այլ ազգերից, ցեղերից, քաղաքակրթութիւններից բաղկացած մի ամբողջ աշխարհի միութեանը, անտես առնելով ցեղերը, ազգութիւնները և լեզուն։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹՈՒՐՔԱՑ «ԱԿԻՆՉԻ» ԼՐԱԳՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՎԱԾԸ

Բագուի մէջ հրատարակվող թուրքաց «Ակինչի» լրագրի Դեկտեմբերի 22-ի անցեալ 1876 թւի համարի մէջ կարդում ենք հետևեալ զարմանալի յօդվածը։

«Յայտնի է, որ մարդը հոգնում է պարապմունքներից, իսկ հոգնելով ցանկանում է հանգստանալ։ Այդ պատճառով ամենահին ժամանակներից ամեն ազգերը շաբաթվայ մէջ վեց օր աշխատում են, իսկ եօթներորդ օրը հանգստանում են։ Բացի սորանից ամեն ազգի մէջ կան տօներ (բայրամ), որոնց նպատակը նոյնպէս հանգստանալն է։ Այն ազգերի մօտ, որոնց արգելված չէ գինու գործածութիւնը, այդ տեսակ տօներ շատ են և այդ տօները նրանք անցնում են քէֆերում, բայց որովհետև մեզ մօտ, մահմետականների մօտ, արգելված է գինու գործածութիւնը, իսկ առանց գինու քէֆ անել չէ կարելի, այդ պատճառով մեզ մօտ տօները քիչ են, և այդ տօների նպատակն էլ քէֆ անելը չէ։ Օրինակի համար մեր «Ղուրբան-բայրամի» տօնի նպատակը նրանում չէ, որ մարդիկ զոհեր բերէին, ուտէին և խնջոյք անէին։ Այդ տօնը ունի մի գլխաւոր նպատակ որ նրան աւելի էլ փառաւոր է անում՝ այդ տօնի ժամանակ ունևոր մահմետականները հաւաքվում են ուխտ Մէկկայի մէջ և այդ միջոցին տեղեկանում են փոխադարձ պահանջների և ցաւերի մասին, այսինքն «Ղուրբան-բայրամի» գլխաւոր փառաւորութեան պատճառը նրա մէջն է կայանում, որ այդ օրվայ ուխտագնացութիւնը մահմետականների իրանց մէջ և մահմետականութեան միաւորութեան նպատակ ունի (իտտիխադի իսլամ)։ Այդ պատճառով Մէկկայի ուխտաւորների նպատակը նրանում չէ միայն որ կատարելով ուխտը, վերադառնան իրանց տունը, այլ նրանում, որ տեսակցելով այնտեղ հաւաքված մահմետականների հետ, հարց ու փորձ անեն նրանց կեանքի եղանակի մասին և յարակցեն (մօտենան) եղբայրների հետ։»

«Այժմ հարցնում եմ ձեզ, եղբայրներ, արդեօք Մէկկա գնացող ձեզանից մէկը կատարում է այդ ճանապարհորդութեան գլխաւոր նպատակը։ Աւա՜ղ... ոչ ոք չէ կատարում, և չէ կարող կատարել, որովհետև մենք այնպիսի տգէտներ ենք, որ ընդունակ չենք ոչ թէ միայն ուրիշ ազգերը ճանաչել, այլ և եղբայրներին։ Եւ այդ պատճառով, եղբայրներ, հիմնեցէք ուսումնարաններ և ուսում առէք, որ գոնէ մեր եղբայրների լեզու սովորելով, մենք կարողանանք կատարել մահմետականութեան գլխաւոր պայմաններից մինը, այն է իրագործել մահմետականութեան միութիւնը։ Իսկ հակառակ դէպքում մեր գեղեցիկ «Ղուրբան-բայրամ» և Մէկկայի ճանապարհորդութիւնը կը նմանվի փայլուն շորերին, որոնք հագցրած են դիակի վրա։»

### ԳԻՐՔ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՃՌՈՎ ՍԿՍԱԾ ԳՈՐԾԸ

Անցեալ 1875 թւին ես ուղարկած էի «Մշակի» խմբագրութեան Գիրք գիւղի հա-

